**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11*** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի մայիսի 21-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11-2»*** ծածկագրով պայմանագրում **2018 թվականի հոկտեմբերի 29-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների ընթացքում ընթացիկ խնդիրներ առաջանալու հետ կապված Կապալառուի կողմից առաջարկվել է պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 30 օրացույցային օրով:

**Փոփոխության նկարագրություն N 1:** Պայմանագրի 1.3 կետում և N 2 «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում «01.11.2018թ.» բառերը փոխարինվել են «30.11.2018թ.» բառերով:

**Փոփոխության հիմնավորում N 1:** ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

**Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն**

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» 10 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ««Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Թ. Ավետիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի մայիսի 21-ին կնքված ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի (Քոբայր ե/գ կայարանի) Քոբայրավանքի (սեղանատան) վերականգնման աշխատանքների պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11-2» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կապալառուն համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 1.3 կետում և N 2 «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում աշխատանքների կատարման ժամկետի ավարտը՝ «01.11.2018 թ.» բառերը փոխարինել «30.11.2018 թ.» բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ մշակույթի նախարարություն | «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 | Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Ծակքար |
| Կառավարական շենք N 2, | հեռ.՝ (094) 22-13-21 |
| հեռ.՝ (011) 58-51-78 | էլ. հասցեն՝ al-maska@mail.ru |
| ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011012961 | ՀՎՀՀ 08207774, |
| ՀՀ ֆինանսների նախարարության | հ/հ 11500995959000 |
| աշխատակազմի գործառնական վարչությունում | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Ալաշկերտ» մ/ճ. |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| Ս. Մուրադյան | Թ. Ավետիսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |